Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-232[85]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «հանված կամ մարված չէ» բառերը փոխարինել «մարված կամ վերացված չէ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «քրեական գործ հարուցվելու» բառերը փոխարինել «քրեական հետապնդում հարուցվելու» բառերով:

Հոդված 3. Օրենքի 136-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետում « գործի » բառը հանել:

Հոդված 4. Օրենքի 143-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «քրեական գործով» բառերը փոխարինել «քրեական վարույթով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 253-րդ հոդվածում «հանցագործությունների գործերով» բառերը փոխարինել «հանցագործությունների վերաբերյալ վարույթներով» բառերով:

Հոդված 6. Օրենքի 254-րդ հոդվածում «քրեական գործ է հարուցում» բառերը փոխարինել «քրեական վարույթ է նախաձեռնում», իսկ «քննչական գործողություններ» բառերը փոխարինել «վարութային գործողություններ» բառերով:

Հոդված 7. Օրենքի 256-րդ հոդվածի 2-րդ մասում «քրեական գործ» բառերը փոխարինել «քրեական հետապնդում» բառերով:

Հոդված 8. Օրենքի 257-րդ հոդվածի 1-ին մասում «հանցագործությունների գործերով» բառերը փոխարինել «հանցագործությունների վերաբերյալ վարույթներով» բառերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքների ուժի մեջ մտնելու օրը: